ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ (EBT) ՄԱՍԻՆ

- Եթե դուք տեղափոխվում էք նոր Շրջան կամ նահանգ որտեղ չկա EBT և ձեր հաշվում մնացել են սննդադրոշմներ, դուք կարող էք խնդրել որպեսզի ձեր մնացած EBT նպաստները վերափոխվի սննդադրոշմի քուպոնների, զանգահարելով ձեր տեղական Հանրային Օգնության գրասենյակը շրջանում, որտեղ դուք ապրում եք: Քանի վոր սննդադրոշմի քուպոնային գրքույկի նվազագույն արժեքն է $ 2.00, ապա յուրաքանչյուր $1.99 արժեք կամ ավելի քիչը պետք է մնա ձեր հաշվում և դուք կունենաք 7 օր ձեր հաշվեկշիռը ծախսելու համար:

- Եթե պատահի EBT սիստեմի սխալ և ձեր հաշվից գանձվի ոչ ճիշտ գումար, կապվեք Հասարակական Ծառայության հետ հետեվյալ անվճար համարով (1-877-328-9677): Ձեր պահանջը կհետազոտվի և եթե դուք իրավացի եք սննդադրոշմի կամ կանխիկ դրամի փոխանցման հարցում, ապա ձեր հաշիվը կվավերացվի տվյալ քանակով:Եթե ձեր պահանջը մերժվում է, ապա դուք իրավունք ունեք խնդրելու նահանգային լսում ձեր տեղական բարեկեցության գրասենյակում:

  Եթե ձեզնից խանութի կողմից գանձվել է շատ ավելին, ապա կապվեք այն խանութի հետ որտեղ գնում եք կատարել:

- Եթե դուք չեք օգտագործում ձեր նպաստները 90 օրում, ապա չեք կարող օգտագործել ձեր նպաստները մինչև չկապվեք ձեր շրջանի գործարարի հետ: Եթե լրացուցիչ 180 օր անցնելուց հետո էլ ձեր նպաստները չօգտագործեք, ապա ամեն ամիս ձեր նպաստները կպահվեն ձեր հաշվից: Սննդադրոշմի նպաստները չեն վերականգնվում: Ձեր կանխիկ դրամի նպաստները կարող են վերականգնվել եթե դուք զանգահարեք ձեր Շրջանային գործարարին: